ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 34

«13» 05 2022 թ.

ք. Երևան

ԶՈՐԻ ՆՈՐԻԿԻ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Զորի Նորիկի Բաբայանը ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 2020 թվականի փետրվարի 17-ից, նախ՝ Տավուշի մարզի դատախազության դատախազի, 2020 թվականի նոյեմբերի 24-ից՝ նույն դատախազության ավագ դատախազի պաշտոնում, 2021 թվականի մարտի 17-ից մինչև հոկտեմբերի 8-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հատուկ քննչական ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի պաշտոնում: Զորի Բաբայանը ներկա պաշտոնում աշխատում է 2021 թվականի հոկտեմբերի 8-ից:

Զորի Բաբայանը հսկողություն է իրականացնում Լոռու մարզում արձանագրված՝ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների, ինչպես նաև ապօրինի ծառահատումների դեպքերով նախապատրաստվող նյութերով և հարուցված քրեական գործերով կատարվող հետաքննության ու նախաքննության նկատմամբ, այնուհետև այդ քրեական գործերով պաշտպանում է մեղադրանքը դատարանում: Իր մասնակցությամբ քննված քրեական գործերով, օրենքով սահմանված ժամկետում և կարգով, ստուգում է դատավճիռների և որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը, ծանոթանում դատական նիստերի արձանագրություններին, կազմում եզրակացություններ, բողոքարկում է դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած անհիմն դատավճիռները և որոշումները, մասնակցում բողոքների քննարկմանը: Կազմում է օրինական ուժի մեջ մտած դատական որոշումներով բողոքարկման միջնորդությունների նախագծեր, ապահովում է մարզի դատախազության աշխատանքային ծրագրով նախատեսված հարցերի և ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարությունների կատարումը, ամփոփում է հանցավորության դեմ պայքարի, նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ: Իրականացնում է դատախազական հսկողության մյուս բնագավառների աշխատանքների կազմակերպման և իրականացման հարցերով ՀՀ գլխավոր դատախազի հրամանների ու ցուցումների կատարման աշխատանքը, պատրաստում տեղեկանքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով կատարում է ստուգումներ, ուսումնասիրություններ, քննարկում, լուծում և ամփոփում է քաղաքացիների, պաշտոնատար և իրավաբանական անձանց

դիմումները, իրականացնում քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում իրականացնում է իր դատավարական ղեկավարման ներքո գտնվող նյութերով և քրեական գործերով անցնող քաղաքացիների ընդունելություն:

2020 թվականի փետրվարի 17-ից մինչև օրս Զորի Բաբայանը հսկողություն է իրականացրել մարզի հետաքննության մարմինների, ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության քննիչների կողմից ավարտված 323 նյութերի նախապատրաստման օրինականության նկատմամբ, որոնցից 6-ով հարուցել է քրեական գործեր, 5-ով վերացրել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները և հարուցել քրեական գործեր:

Նշված ժամանակահատվածում հսկողություն է իրականացրել ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության, ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության քննիչների կողմից քննված 195 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, որոնցից 43 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ և 1 քրեական գործ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան, 45 քրեական գործով վարույթը կարճվել է, 15 քրեական գործ ուղարկվել է այլ մարմին, 46 քրեական գործով վարույթը կասեցվել է, 15 քրեական գործ միացվել է:

Հսկողություն իրականացրած քրեական գործերից 8-ով կայացրել է քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու 8 որոշում, տվել է 46 գրավոր ցուցում, ներկայացրել է ծառայողական քննություն կատարելու 13 միջնորդություն:

Հանցագործության կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները պարզելու, դրանք վեր հանելու կապակցությամբ պատկան մարմիններին ներկայացրել է 26 միջնորդագրեր:

Զորի Բաբայանի կողմից 2 քրեական գործով վերացվել են քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու, 1 քրեական գործով՝ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 2 որոշումներ, 2 քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, նախապատրաստված նյութերից 7-ով՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները, մեղադրական եզրակացությամբ ստացված 1 քրեական գործ վերադարձվել է լրացուցիչ քննության:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 60 քրեական գործով պաշտպանել է մեղադրանքը, որից 50 քրեական գործով կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ մյուսների դատաքննությունն ընթացքի մեջ է, արդարացման դատավճիռներ չեն կայացվել: Դատավճիռների դեմ բերել է 3 վերաքննիչ բողոք, որոնցից 2-ը մերժվել են, իսկ 1-ը՝ բավարարվել: Մինչդատական վարույթի շրջանակներում կայացված դատական ակտերի դեմ բերել է 4 վերաքննիչ բողոք, որից 1-ը բավարարվել է, 3-ը՝ մերժվել:

Զորի Բաբայանը կատարել է 17 քաղաքացիների ընդունելություն:

Զորի Բաբայանը տիրապետում է հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և տակտիկային: Տիրապետում է քրեական և քրեադատավարական օրենսդրությանը, դրանց վերաբերյալ ՀՀ դատախազության կոլեգիայի, ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներին, մշտապես աշխատում է մասնագիտական որակների կատարելագործման ուղղությամբ: Բարեխղճորեն կատարում է իր

պարտականությունները, դատավարական փաստաթղթերն ու դրանց նախագծերը կազմում է պատշաճ, պահպանում է դատախազի վարքագծի և աշխատանքային կարգապահության կանոնները, վայելում է գործընկերների հարգանքը:

Զորի Բաբայանին ՀՀ դատախազությունում աշխատելու ընթացքում 2020 թվականին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով շնորհվել է արտահերթ դասային աստիճան: Կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Զորի Բաբայանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 5-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել Լոռու մարզի դատախազության ավագ դատախազ Զորի Բաբայանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ